



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn

1007



Ճ Ե Ր Մ Ա Կ

Կ Ա Մ

Պ Ա Ր Ո Ն Ս . Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն

Ե Ի

Ի Ի Բ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը

Ա Ր Մ Ե Ն Ա Կ Հ Ա Յ Կ Ո Ւ Ն Ի



Handwritten number '48' in the left margin.



1999

Ա . Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Տ Պ Ա Ր Ա Ն

Մ Ա Ա Լ Ի Խ Ա Ն Թ Ի Ի 15

Handwritten numbers '150' and '1007' in a box.

(1865)



RA. 1008

91007-60

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սա որ քիչ կամ շատ տեղեկութիւն ունի այս աշխարհիս հին եւ նոր պատմութեանը, հարկաւ կրնայ յիշել կամ գիտնալ թէ՛ որ եւ իցէ նոր սկզբունք մը իւր յայտնուելուն հետ դատապարտուած է. Մովսէս երբ ուզեց Խորայէլը ազատել Փարաւոնի եւ կամ Եգիպտական հարստահարութեան ձեռքէն, իւր առաջին քարոզած սկզբունքը Ազգասիրութիւնն էր. Ազգասիրութիւնը՝ որ շատ հաւանական է թէ Մովսէսէն առաջ ուրիշ քարոզիչներ ալ ունէր, սակայն Մովսէս որ Եգիպտական բոլոր գիտութեանց տեղեակ եղած էր՝ լաւ նկատելով թէ իւր ազգը չիպիտի փրկուի մինչեւ որ ազգասիրութեան հոգին նորա մէջ չիտարածի, այնպիսի ընթացք մը բռնեց իւր այս սկզբունքը յառաջացնելու համար որ խիստ վտանգաւոր լինելէն ՚ի զատ ոչ իմաստասիրական էր եւ ոչ ալ մարդասիրական. Մովսէս որ եռանդուն ազգասէր մի էր բնաւ չեր կրնար գիմանալ երբ Հրէայն հարստահարեալ կը տեսներ, անանկ որ երբ մը տեսաւ թէ Հրէայ մը՝ կը հարստահարուի Եգիպտացի է մը. մէկէն սպաննեց Եգիպտացին: Մովսէսի սկզբունքը միայն ազգասիրական էր, եւ թէեւ Եհովայ (Մովսէսի հինգ գրեաց նայելով) նորա հզօր պաշտպանն էր, սակայն Մովսէս շատ նեղութիւններ քաշեց եւ վտանգներ անցուց մինչեւ որ իւր սկզբունքը տարածեց Խորայէլի մէջ:

Ասոր նման ամեն նոր սկզբունք երբ ժողովրդ-



դեան մը մէջ առաջին անգամ կամ լաւագոյն
բացայայտ կերպով կը յայտնուի, շատ ընդդի-
մութիւններու եւ թշնամիներու կը հանդպի. շա-
տարակ ժողովուրդը չէ սակայն՝ որ նոր սկզբունքի
մը դէմ կը զինի, այլ ասոնց մէջէն նախայարձակ-
ները անոնք կը լինին որ կերպով մը ազդեցու-
թիւն ունին հանրութեան վրայ. որ երբ կը տես-
նեն թէ իրենց այս ազդեցութիւնը վտանդի մէջ
է, եւ ըրած եւ ընելիք կողոպուտներնին ձեռքեր-
նուն ելլելու վրայ, անանկ սոսկալի աղաղակներով
կ'սկսին յարձակիլ նոր սկզբունքին եւ կամ նոյա
հրատարակչին վրայ՝ որ ժողովուրդը կը շուարի եւ
կ'սկսի իւր բուրդը կզոզներուն հետ՝ պատերազ-
միլ այն ձեռքին դէմ՝ որ իւր փրկութեանը հա-
մար ուխտաց եւ որոշած է աշխատիլ :

Միտքերնիս մեր ընթերցողաց լաւ մը յայտնե-
լու համար խօսքերնիս մասնաւորեմք, եւ այս
փոքրիկ տետրակնիս հրատարակելու օգտուածաբ-
խնացնեմք :


Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Ե Ի

Պ . Ս . ՓԱՓԱԶԵԱՆ

Յայտնի թող լինի ամեն իմ աղագակիցներու օ
թէ մենք տարիներէ հետէ Ազգերնուս կացու-
թիւնը նկատած եւ նորա բռնած ճամբուն ապօ-
րինաւորութեան վրայ վերահասու լինելով, ճրշ-

մարիտ ազգասիրութեամբ փառագեցանք նորա
այնպիսի սկզբունքներ մատակարարել որոնցմով
անտարակոյս էինք եւ եմք թէ հնարաւոր է մի-
այն մեր բարեկարգութիւնը եւ երջանկութիւնը
եւ թէ խիստ լաւ գիտէինք որ մեր այս ընթաց-
քին դէմ ԹԷՆԱՄԻՆԵՐՈՒ պիտի հանդիպէինք ,
սակայն ընկերասիրութեան եւ ճշմարտասիրու-
թեան սգին , որ մեր առաջնորդն է , սիրտ տուա-
մեզ եւ ասպարէզ ներտեց , այնպիսի ասպարէզ
մը , ուր արդէն դանուողք հազիւ թէ մինչեւ հի-
մա իրենց շուրջը դանուող ժողովրդեան բարեւոյց
համար բան մը ընել խորհած էին . մենք ~~պիտէինք~~
թէ ժողովուրդէն աւելի այնպիսիներուն թշնա-
մութիւններուն պիտի հանդպինք՝ որ ~~հա~~ ամենէն
առաջ պիտի համբուրէին մեր ճակատը . բայց
մեր վրայ գալիք թշնամութիւնները մեր ~~բանի~~
մը տեղ չէինք կրնար դնել , անոնցմէ ել կեցիլ եւ
հետեւաբար մեր պարտաւորութիւնը վատաբար
չի կատարել չէինք կարող : Ուստի ալ տեսնելով
թէ կորոնցնելու ժամանակ չի կայ . քանի մը դեռ
մեր մէջ չի յայտնուած սկզբունքներ հրատարա-
կեցինք , որ ասոնք էին . նախ՝ թէ մարդկային
որ եւ իցէ ընկերութիւն մը որ կուզէ լուսաւոր-
ուիլ եւ այս աշխարհիս մէջ երջանիկ լինիլ պարտի
բնութեան ԱՄԵՆ օրէնքներուն եւ մարդկային կազ-
մութեան յիշեալ օրէնքներուն հետ ունեցած յա-
րաբերութեանց տեղեակ եւ ընկերական պարտա-
ւորութեանց լաւ վերահասու լինիլ : Արկրորդ՝ թէ
մարդկային բարոյականութիւնը երբէք ծագումն



առած չէ կրօն քէն : Երրորդ՝ թէ կրօնաւորաց եւ
բարոյականութեան մէջ ահագին անջրպետ մը
կայ : Զորրորդ՝ թէ լոկ կրօնասիրութիւնը միմիայն
հանդերձեալ կեանքի մէջ երջանկութիւն մը ձեռք
բերելու համար գրեթէ տրուած պարտաւորու-
թիւն մի է : Հինգերորդ՝ թէ ճշմարիտ կրթութիւ-
նը ՄԻԱՅՆ կրօնասիրութեան եւ անոր վերաբերեալ
ուսմանց մէջ չէ : Վեցերորդ՝ թէ մարդս աշխարհ
եկած չէ ընդ հանդերձեալ կենաց համար տան-
ջուելու , այլ այս կեանքս ալ շատ երանութիւն-
ներ ունի որ վայելելու է : Եօթերորդ , թէ մենք
որքան որ կրօնքը նոյնքան ալ յարգելու եմք նո-
րա պաշտօնեաները :

Ահա ասոնք են մեր հրատարակած սկզբունք
ները Պէգասեան Թուչնիկ Հանդիսին « Գերեզմանք
Երիտասարդաց » եւ « Գաղանիք Բնութեան » ա-
նուն աշխատասիրութիւններնու միջոցաւ , եւ
մինչդեռ կը մտածէինք թէ՛ յիշեալ սկզբունքները
ինչպէս բոլոր ազգին մէջ տարածեմք , ահաւասիկ
ամենէն աւելի զմեզ սիրող եւ շատ անգամ մեր
ճակատը համբուրող Պարոն Ստեփան Փափա-
ղեան ժամանակի խմբագիրը* թշնամիի մը ամեն
յանգամանքներով մեր վրայ հարձակեցաւ խիստ
ծիծաղելի եւ արհամարանաց արժանի կերպով ,

* Շնորհակալ եմք ժամանակի խմբագրէն որ իւր
այս ընթացքովը պատճառ տուաւ մեզ որ սկզբունք-
նիս լաւ մը բացատրեմք եւ հրատարակեմք յօդուա
հանդու թիւան :

վասն զի նա թէեւ շատ լաւ գիտեր եւ ամենեւին
տարակոյս չուներ մեր ճշմարիտ ազգասիրութեան
եւ անկեղծութեան վրայ սակայն չեմ գիտեր որ
սեւ ոգիին հնազանդելով՝ մեր սկզբունքներուն
ծուռ մեկնութիւն տալու իմաստակութեան եւ
մեզի թշնամութիւն ընելու ապօրինաւորութեան
ձեռք զարկաւ :

Իմաստակութեան ձեռք զարկաւ Պարոն Փա-
փազեանը մեր սկզբունքներուն ծուռ բացատրու-
թիւն տալովն , վասն զի ինչպէս որ կրնան տես-
նել ամեն իմ ընթերցողներս մեր վերոյիշեալ եօ-
թը սկզբունքներնուս մէկն ալ անկրօնութեան եւ
կամ անհաւատութեան նշան մը չունին վրանին ,
ինչպէս որ համառօտաբար պիտի բացատրեմք մի
առ մի :


Ս .

Թէ Տարգմանի՞ն որ եւ իցէ ընկերութեան որ կողմէ լուսա-
ւորութիւն եւ այս աշխարհիս մէջ երջանիկ լինել՝ պարտի
բնութեան ամեն օրէնքներուն է- Տարգմանի՞ն հասցնութեան
այն օրինաց հետ անեղած յարաբերութեանց արդեան՝ եւ
ընկերական պարտաւորութեանց լաւ վերահասու լինել :

Արդարեւ հազիւ թէ կրնամ առանց խնդա-
լու այս սկզբունքը հաստատելու ելլել , վասն զի
այնքան յայտնի է այս սկզբունքիս ճշմարտութիւ-
նը որ ամենափթամիտ մէկն ալ կրնայ ինքն իրեն
մտածել՝ թէ մարդկային սեռին երջանկութիւնը
գլխովին կախումն պէտք է ունենայ բոլոր այն զի-

առթիւններէն եւ աւանդներէն որ բնութեան
 կը վերաբերին , բնութեան՝ որ Արարչին կողմանէ
 ինչպէս ամեն ուրիշ արարածներու նոյնպէս եւ ա-
 ւելի մարդու վրայ իշխող ձեռքն է , եւ որոյ հզօր
 եւ անխուս ամենի ազդեցութիւններէն ազատիլ
 ԱՆՀՆԱՐ է մեզ , եւ հետեւաբար յայտնի չէ՞ որ
 մարդս եթէ տեղեկութիւն չունենայ նորա ԱՄԵՆ
 օրէնքներուն եւ ազդեցութիւններուն վրայ , հար-
 կաւ շատ անգամ նորա ազդեցութեանց դէմ
 պիտի ուզէ մագառիլ , եւ հետեւաբար ապեր-
 ջանիկ լինիլ . միթէ ան՝իւ եւ անհամար ցա-
 ւայից օրինակներ բաւական չեն մեզ համոզելու
 թէ՛ մարդս անտեղեակ լինելով բնութեան օրէնք-
 ներուն՝ երբ շատ անգամ ուրիշ մարդկային օրէնք-
 ներու պատճառաւ կուզէ նորա ազդեցութիւննե-
 րէն ազատիլ դառնապէս կը պատժուի , քանի՞ ան-
 թիւ են այն մահերը որ մի միայն բնութեան օրէնք-
 ներուն տեղեակ չիլինելուն արդասիքն են . եւ
 քանի՞ միլիօնաւոր մարդիկներ երկարակէաց , ա-
 ոռղջ եւ երջանիկ կեանք մը պիտի ունենային ե-
 թէ լաւ վերահասու լինէին մարդակազմութեան
 դիտութեանը եւ բնութեան մարդկային կազմու-
 թեան հետ ունեցած զօրաւոր առնչութեանը ,
 քանի՞ միլիօնաւոր աղջիկներ չի պիտի մեռնէին ե-
 թէ մարդս տեղեկութիւն ստանար թէ բնութեան
 օրէնքը չիներէր որ արբունքի եւ կազմական կատա-
 բելութեան չի հասած աղջիկ մը ամուսնանայ , քա-
 նի՞ բիւրաւոր երիտասարդներ առռղջ , ա-
 ոռղջ եւ երջանիկ կեանք մը պիտի վայելէին , եւ

մահուան ճիրաններէն ազատէին թէ որ գիտնային
 թէ բնութեան օրէնքը չի ներեր որ երիտասարդք
 դիճութեան եւ հեշտական շուայութեան հետե-
 ւին, քանի՞ անթիւ ամուսնացեալներ վաղահաս
 մահուան ձեռքէն պիտի ազատէին եւ հիւանդու-
 թեանց ենթակայ չի պիտի լինէին՝ եթէ ուսանէին
 թէ բնութեան օրինաց հակառակ է ստեպ մերձա-
 ւորութիւնները, քանի՞ իրենց անձին կազմութեան
 եւ յղութեան օրէնքներուն վրայ տեղեկու-
 թիւն չունեցող կանայք թէ՛ ինքզինքնին կ'եղ-
 ծեն եւ թէ որդեոսպանութիւն կրնեն արդանգ-
 նուն մէջ արդէն հողեւորեալ էակները վթելով
 իսկ քանի անհամար յղի կանայք մարմնա-
 պանութիւն է, անձնասպանութիւն է սղա-
 տելով անվտանգ հանդիստ եւ երջանիկ
 նութեան պաշտօննին պիտի կատարէին թէ որ գի-
 նային թէ բնութիւնը անպատիժ չի թողնէ
 իրենք պահեցողութեան պատճառաւ մեծ պահոց
 քառասուն եւ երկու օրերը ձէթ եւ ասոր նման
 առողջութեան մնասակար կերակուրներ ուտեն,
 փոխանակ կաթ, կանանչեղենով եփուած մսեղէն
 կերակուրներ ուտելու* . ասոնցմէ իզատ մարդկա-



* Նմանապէս քանի՞ անմեղ մանկտիք քահանայից ջը-
 րոյ նկատմամբ բնութեան օրինաց անտեղեակ գտնուե-
 լովնին, եւ մանկանց նորակազմ եւ խիստ փափուկ մարմ-
 նոյն վրայ բողորովին տղէտ գտնուելովնին մկրտութեան
 պատճառաւ մեռած են . ինչպէս խնդարս կը բռնէ քա-
 նի որ հետեւեալ պատմութիւնը կը յիշեմ երբ քահանայ
 մը մանուկ մը սաստիկ տաք ջրոյ մէջ խաշելով կը
 դառնայ ու կ'ըսէ «օրհնած այս շեղաւ ուրիշ մը բեր .»

յին սեռին հարիւրին իննսունը մահէ, հիւանդութիւններէ եւ զանազան ուրիշ ապերժանկութիւններէ ազատ մնալով երկարակեաց, առողջ երջանիկ կեանք չի պիտի ունենային, եթէ իրենց կազմական բնութեան վրայ հատուծիւն ունենալով առողջապահական օրինաց համեմատ, անձերնին, հազուատնին, բնակարաննին մաքուր, ուտելիքնին եւ խմելիքնին բնականի համաձայն, եւ աշխատութիւննին իրենց կազմութեան բնութեան յարմար լինէր, դարձեալ անհուասարութեան պատճառաւ քանի անթուելի չարիքներու առջեւն պիտի առնուէր եթէ շնորհիւ բնական գիտութեանց մարդս վեհասու լինէր թէ՛ ամեն մարդ միահաւասար որդիք են բնութեան, դարձեալ եւ դարձեալ միթէ բնական գիտութեանց շնորհիւն չէ՛ որ երկրագործութեան հանքաբանութեան, մաթէմատիկական գիտութեանց միջոցով խել մը երջանկութիւններ կը վայելէ մարդս . . . դեռ երկարեմ . . . արդեօք կայ այնպիսի մէկը որ բնութեան օրէնքներուն վերաբերեալ գիտութեանց թշնամի լինի, միթէ իրաւ է որ Պ. Փափազեանը մեր « գաղտնիք բնութեան » կամ սկզբունք, մարդկային ծննդականութեան անուն *

* Պարոն Փափազեանը որ մեր յիշեալ գիրքը « Եւրոպականութեան կ'ըսէ թէ « պատկերներուն նայելով « Եւրոպէ » հետեւաբար կամ այս խօսքով սկտք է հասկնամք թէ ինքն յիշեալ գրքին մէջ մեր հրատարակած գիտութիւնը օգտակար տեսած է եւ կամ յիշեալ գիտութեան վրայ ամենեւին տեղեկութիւն չունենալով

աշխատասիրութիւնն իս « զ զուեւէ » կը համարի ,
 արդեօք Պարոն Ստեփանը գոնէ վարկեան մը խոր-
 հեցաւ այս յիմարական ածականը գործածելէն
 առաջ , միթէ չի խորհեցաւ թէ՛ ինձ ի՞նչ պիտի
 պատասխանէ թէ որ իրեն հարցնեմ թէ դրքիս
 պատկերները այսինքն Աստուծոյ մարդկային սեռին
 պարգեւած ճննդական գործարանաց նկարները
 չեն . այն գործարանները որ Արարիչն ստեղծած է եւ
 տեսած է « որ բարի են » . միթէ Պարոն Ստեփանը
 ինքն անձամբ անաստուածութեան մէջ չիյնար ա-
 րարչին ստեղծած եւ բարի տեսած մարդկային
 կազմութեան վերաբերեալ մէկ մասին նկարները
 եւ անոնց վրայ հարկ եղած դիտութիւնը տարա-
 ծելու բարի դիտաւորութեամբ հրատարակուած
 գիրքի մը զգուելի ըսելովը . կը հարցնեմ Պարոն
 Փափազեանին , իրաւ ինքն կը զգո՞ւի անոնցմէ ,
 եւ իբր ճշմարիտ քրիստոնեայ մը չընդունի՞ր թէ՛
 « Աստուծոյ ամէն ստեղծածը բարի է , թէ որ գո-
 հութեամբ ընդունուի » : (Առաջին Թուղթ առ
 Տիմոթէոս գլուխ Դ , համար 4) եւ դարձեալ Պա-

իւր տգիտութիւնը յայտնի չընելու համար գոնէ պատ-
 կերադատաքննութեան ելած է , խեղճ եւ տգէտ պա-
 րոն , որքան դժուար բան է անուսումն լինիլ եւ մի-
 այնգամայն խմբագրութեան պաշտօն վարել . գիտէ՞
 Պարոն Փափազեանը թէ մեր երիտասարդներուն եւ
 պատանիներուն գրօլանները լեցուն են այնպիսի պատ-
 կերներով , որոնց վերաբերեալ գիտութեանց վրայ տե-
 ղեկութիւն չունենալով Պարոն Փափազեանի պէս հար-
 կատ գանոնք ի չարն գործածելու արժանիք են :

բոն Փափաղեանը մեր գրքին զգուելի անձական
տալովն բուն իսկ նոյն անձականը աստուածաշունչ
չին ասուած չիլինիր որոյ մէջ մենէ շատ աւելի բացա-
յայտ կերպով գրուած քներ, պատմութիւններ եւ օ-
րէնքներ կան մերձաւորութեան նկատմամբ*, դար-
ձեալ թէ որ մեր գիրքը զգուելի է ծննդական գոր-
ծարանաց եւ անոնց օրինաւոր գործածութեան վե-
րայ խօսելովը, աւելի զգուելի սեպելու չէ այն սովո-
րութիւնը որ մեր եկեղեցին ունի խոստովանութեան
միջոցին, երբ քահանայն դեռ արբունքի չի հասած
աղջկան մը կամ պատանիի մը ախանջէն իվար չի լը-
սուած ամենապիղծ մեղքերը կը յիշէ, դեռ երկա-
րեմք Պ. Փափաղեան քեզ համոզելու համար թէ
մարդկային ազգին երջանկութիւնը բնութեան օրի-
նաց վրայ լաւ հմտութիւն ունենալէն կախումն ունի,
եւ թէ շատ մեղքեր եւ հետեւաբար շատ ապեր-
ջանկութիւններ մարդուս նոցա վերայ տեղեկու-
թիւն չունենալէն եւ կամ քեզի պէս ծուռ աչքով
նայելէն կը յառաջանան. բայց չէ, դու արդէն այս

* Կարդայ Սիւգեմի եւ Գինաի սիրահարութիւնը ծը-
ննդոց ԼԿ գլուխ 1—2 համար : Յուդայի եւ Թամարին
պատմութիւնը Մենդոց գլուխ ԼԸ 12—19 համար : եւ
Աստուածաշունչի մէջ կը կարդանք Ամոնի իւր քոյ-
րը պղծելը, եւայլն եւայլն, միթէ Պարոն Փափաղ-
եան կը համարձակի՞ ըսել թէ, Աստուածաշունչը
ՁԶՈՒՆԵԼԻ գիրք մի է, որովհետեւ երիտասարդները
զայն կարդալով կրնան արթննալ. Պարոն Փափաղեան
թէ իմաստասէր չես դոնէ ճշմարիտ բարոյականութեան
վրայ գաղափար ունեցիր :

ըսածիս կամ սկզբունքիս ճշմարտութեանը վրայ
լաւ վերահասու ես, եւ միայն կեղծաւորութեամբ
է որ դէմ կը դնես ինձ, սակայն Պարոն Ստեփան,
լաւ գիտցիր որ քեզի նման շատ սրբութիւն ցուցը-
նողները մեծ պատուոյ չեն կրնար արժանանալ :

Բ .

Թէ Տարդեային բարոյականութիւնը երբեք կրօնքէ
ճագումն առած չէ :

Այս սկզբունքն հաստատելու համար ալ շատ
ներդութիւն չպիտի քաշենք, վասն զի քանի որ
կրնդունինք մարդս իբր բարոյական եւ պատաս-
խանատու էակ մը՝ հարկաւ կը պարտաւորիմք նա-
եւս ընդունիլ թէ բարոյականութիւնը նորա նախ-
նական եւ անբաժանելի մէկ հանգամանքն է . իսկ
եթէ այս ալ չուզեմք ընդունիլ, ան ատենը բաց
ի Բրիտոնէութենէն ամեն ուրիշ կրօնքներն ալ
իբրեւ աստուածային յայտնութիւնք պարտիմք ըն-
դունել, վասն զի աշխարհիս մէջ գտնուած ամեն
կրօնք ալ զրեթէ մի եւ նոյն բարոյականութիւնը
կը պահանջեն իրենց հետեւողներէն :

Մարդկային բարոյականութիւնը որ մի միայն
ընկերասիրական պարտաւորութեանց մէջ կը կա-
յանայ, չիկայ կրօնք մը աշխարհիս վրայ որ այս
սկզբունքը ընդունած եւ պաշտպանած չլինի .
Ամերիկայի եւ Ուկրինիայի մէջ գտնուած ամեն
կռապաշտ ազգեր, որոնց վրայ Միսիօնարք մեզի
վայրենութեան զաղափար տալու շատ կը տքնին*

* Թէ Հռովմէական եւ թէ Բրոթէսթանդ միսիօնար-

թէ որ ընկերասիրական սկզբունք չունենային ,
 անհնար կը լինէր որ զատ տէրութիւններ ու-
 նենային , ԸՆԿԵՐԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ լինէին ՌՁ :
 Նմանապէս Ասիայի բոլոր հին ազգերը որոնց
 պատմութիւնները ունիմք Քրիստոսի աշխարհ գա-
 լէն , այսինքն Քրիստոնէական կրօնքը յայտնուե-
 լէն առաջ ընկերասիրական սկզբունք ունենալնուն
 համար կարողացեր էին հզօր կառավարութիւն-
 ներ կանգնել , հոյակապ եւ բազմամարդ քաղաք-
 ներ շինել եւայլն , եւ բուն իսկ Մովսիսական դը-
 րութենէն այսինքն հին եկեղեցին կազմուելէն
 առաջ մարդիկ ընկերասէր լինելնուն համար Բա-
 բելո՛ւի աշտարակը կանգնելու ձեռք զարկին :
 Մինչդեռ Մովսիսական դրութիւնը աչքի տեղ աչք,
 եւ ակռայի տեղ ակռա կը պահանջէր , եւ վեց դար
 կար Քրիստոնէութեան յայտնուելուն , Չինաստա-

ները , վերոյիշեալ ազգերը վայրենի կը կոչեն . պատե-
 րազմի ժամանակ մէկզմէկ ուտելնուն համար . սակայն
 ամենեւին չ'են խորհիր այս պարօնները եւ կամ թէ բա-
 բարոյականութիւնը միայն Քրիստոնէութենէն ծագու-
 մըն առած է ըսողները թէ մենք ոչ վայրենիներս ե-
 թէ պատերազմի ժամանակ մէկզմէկ չեմք ուտեր ,
 պատճառը քիչ կամ շատ կրթութիւն ու. ենալնիս է
 վասն զի բուն իսկ մեր պատերազմի ժամանակ սրտեր-
 նուս զգացած կատաղութիւնը անոնցմէ վար չ'իմնար
 եւ շատ հաւանական է որ մենք ալ մէկզմէկ պիտի ու-
 տէինք . թէ որ սովորութիւնը ներէր : Պ . Փափաղեանը
 թէ որ զիս ուտի , այնքան չը պիտի ցաւէի , քան թէ
 որքան որ ցաւեցայ՝ նորա զիս անուանարկ ընելուն հա-
 մար :

նի մէջ « Զոր ինչ կամիք թէ արասցեն ձեզ մար-
դիկ , այնպէս արարէք եւ դուք նոցա » սկզբուն-
քը քարոզուած եւ ընդունուած էր : Յոյր ասոնք
թէ եւ բաւական են մեզ համոզելու թէ մարդ-
կային բարոյականութիւնը կրօնքէ ծագումն առած
չէ , այլ սակայն ըսածնիս աւելի հաստատելու
համար կընամք մեր արդի Հայրապետին իրեն
• Բարի մարդ եւ բարի Քրիստոնեայ » անուն աշ-
խատասիրութեան մէջ « Մարդս 'ի բնէ բարի է »
յիշած եւ պաշտպանած սկզբունքը յառաջ բերել
եւ նոյն սկզբունքին ճշմարտութիւնը անտարակու-
սելի լինելը յայտնելու համար սա ալ աւելցնել
թէ՛ եթէ մարդս առանց կրօնքի ինքնին չունի բա-
րոյականութիւն , ուրեմն ամեն այն ազգերը որ
միայն բնականով կը քայլեն , եւ դեռ լսած չունին

Եթէ մեր Պ . Փափազեանը Աւետարանի ճշմարտու-
թեանը կը հաւատայ՝ թող շտէ թէ ինչ կ'ըսէ այս մասին
Պողոս առաքեալ . . . ուստի հեթանոսները որ օրէնք
չ'ունին երբոր Բնականաբար օրէնքին գործերը կը գործեն
օրէնք չունենալով՝ իրենց անձերուն օրէնքը բուն իրենք
կ'ըլլան » Հռով . բ . 14 . Իսկ թէ որ կը յարդէ հին Հայ-
րապետներն ալ սա հետեւեալն ալ թող կարդայ « Պար-
սիկք Յոյնք եւ ամենայն ազգք հեթանոսաց առանց այլ
օրինաց իրաւունս դատաստանի կատարեն 'ի պատուել
դրարեգործս եւ 'ի պատժել զչարագործս » Յաճախա-
պատում գլ , 8 , երես 87 :

Թէ որ փափաքէինք կրնայինք հազարաւոր Հայրա-
պետական վկայութիւններ յառաջ բերել թէ մարդս
ինքնին առանց օրէնքի կամ կրօնքի բարոյականութիւն
ունի :

Քրիստոնէական կրօնքի վարդապետութիւնը , ի-
րենց ըրածներուն համար բնաւ պատասխանատու
չեն պարտիր լինիլ Աստուծոյ . ըստ որում եթէ
Աստուած տուած չէ նոյն բարոյականութիւնը , ա-
մենեւին իրաւունք չպիտի ունենայ անոնցմէ իւր
չտուածին հաշիւն պահանջելու :

Այս ըսածներէս գուցէ հարցունէ ռամիկը թէ
հապա կրօնքը ի՞նչ պաշտօն ունի , եթէ անկէ՛ չի
ծագիր բարոյականութիւնը . այս հարցւան կը պա-
տասխանեմ թէ ամեն կրօնք կազմուած են չէ թէ
մարդս բարոյական ընելու , այլ նորա բարոյակա-
նութիւնը պաշտպանելու համար , վասն զի մարդ
ազատ լինելով կրնայ գործածել եւ չի գործածել
իւր բարոյականութիւնը . ասոր համար հարկ էր որ
այնպիսի կրօնքներ կազմուէին , որ մարդս շարու-
նակ իւր բարոյականութեան հետեւող ընելու
ջանային , ահաւասիկ այս է կրօնքի եւ բարոյակա-
նութեան խնդիրը , մարդս ՚ի ծննդենէ բարոյա յա-
կանութեան տէր էակ մի է , իսկ կրօնքը զանի
իւր բարոյականութեան մէջ պահելու պաշտօնը
ունի . Պ . Փափաղեանը թող ուզ . ծին շափ շարա-
մտութիւն ընէ՝ զիս անկրօն հռչակելու թէ որ
կուզէ խայտառակիլ իմաստասիրութեան առջեւ :

Գ .

Թէ կրօնաւորաց եւ բարոյականութեան ճշ ճծ
անջրդէտ ճշ հայ :

Մեր կղերին անբարոյական վարմունքը ար-

ծախսիրութիւնը եւ փառասիրութիւնը մեր այս
 սկզբունքը ինքնին կը քարոզեն . վասն զի նոքա են
 որ ինքզինքնին յաջորդ Քրիստոսի կը սեպեն ա-
 ռանց անոր մէկ հանգամանքն ունենալու . Քրիս-
 տոս խոնարհ էր , մեր կրօնաւորները հպարտ են .
 Քրիստոս ողորմած էր , մեր կղերը անողորմ է . Քր-
 իոտոս աշխարհի համար խաչուեցաւ , մեր կրօ-
 նաւորները ամեն օր մեզ խաչելու վրայ են . առնք-
 ոչ իրաւունք կը ճանչնան եւ ոչ արդարութիւն .
 եւ կողոպտած վանքերնուն համար աներեսարար
 ստակ կը խնդրեն մեզմէ . եւ վերջապէս բարոյա-
 կանութիւն ըսածդ նոցա համար քսանեւ վեց գրե-
 խով ստանայ մի է , որմէ ստակալով հեռացած են ,
 վախնալով որ չը լինի թէ բարոյականութիւնը
 ձեռք առնեն 'նէ' անօթի մնան : Պ . Փափազեանը
 արդեօք չի շառագունիր , երբ այս մարդիկները
 « Աստուծոյ եւ Քրիստոսի տաճարին պաշտօնեայ-
 ները » կանուանէ . կը հարցընեմ ընթերցողացս թէ
 ևս եմ անկրօնը , որ տեսնելով Քրիստոսի տաճարին
 պղծուիլը խել մը տգէտ , ինքնահաւան եւ բարո-
 յականութիւննին եղծուած մարդոց ինքզինքնին
 « Քահանայ Աստուծոյ » կոչողներուն պատճա-
 ռաւ , ձայն կը բարձրացնեմ նոցա դէմ , թէ ոչ , ան-
 կրօնը Փափազեանն է որ ամենեւին այս սրբապղ-
 ծութիւնները բանի տեղ չի դնելով կելլէ եւ յիշ-
 եալ մարդիկները « Աստուծոյ եւ Քրիստոսի տաճա-
 րին պաշտօնեայները » կը կոչէ* :

* Աշխարհիս ստամու թիւնը երբ լաւ մը աչքէ անցը-

Թէ ԼՈՎ կրօնասիրութիւնը թի միայն հանդերձեալ
 կեանքի ճշ ճշ երջանկութիւնն ճշ յետո՛ք երեւոյս համար ԳԸ-
 բեմէ որո՞ւսմ որորորոսութիւնն թի է :

Երբոր անապատականք եւ կուսանքներ մեր
 այս սկզբունքը կը հաստատեն , որոնք « Մեռած
 վիներով աշխարհիս համար » հանդերձեալի համար
 իւրեանց կեանքը կանցնեն առանց ամենեւէն օ-
 գուտ մը ունենալու աշխարհիս :

Պ . Փափագեանը թէ որ գիտնար թէ ԼՈՎ կրօ-
 նասիրութիւնն ինչ կը նշանակէ , ասոր դէմ բողո-
 քելու ոչ արիութիւն պիտի ունենար եւ ոչ ալ ե-
 րես , վասն զի նա որ ԼՈՎ կրօնասէր է « այս աշ-

նենք՝ կը տեսնենք որ կրօնքը իւր նպատակին չը կրցաւ
 հասնիլ . քանզի կրօնքը՝ որոյ նպատակը մարդս իւր բա-
 րոյականութեան մէջ պահել է , կղերականաց ձեռքը
 իյնալով անանկ այլակերպեցաւ որ օգուտէն աւելի
 վնասակար եղաւ մարդկային բարոյականութեան , ան-
 անկ որ որեւիցէ մարդ մեծ իրառամբ կրնայ տարակու-
 սիլ կրօնի ճշմարտութեանը վրայ , եւ կամ թէ ոչ
 կպարտաւորի կղերը մարդկութեան ամենէն մեծ թշ-
 նամին սեպել . . . Մարդկային բարոյականութիւնը հիմա
 եղծուած է , եւ ասոր ալ պատճառը կամ կրօնքն է եւ
 կամ կղերը , եթէ ու զենք կրօնքը պաշտպանել կպար-
 տաւորիմք կղերը յանցաւոր դատել , իսկ թէ որ ու-
 դենք կղերը պաշտպանել անատենը կրօնքը անհիմն
 սեպելու եմք : երբ մեր պարոն Փափագեանը կղերը « Յի-
 սուսի եւ Քրիստոսի տաճարին պաշտօնեաները » կանու-
 անէ , կերեւայ թէ կրօնքը անհիմն կը սեպէ :

խարհիս բաները չի կրնար խորհիլ » եւ հետեւաբար հոս մարդկային ընկերութեան բարեկարգութեանը եւ երջանկութեանը ամենեւին օգուտ մը չունենար, վասն զի ՂԱԿ կրօնասէր է :

Իմաստակ չէ՞ Պ. Փափազեանը մեր այս սկզբունքին ալ դէմ դնելով զմեզ անկրօն հռչակելովը. անմիտ չէ՞ նա որ չի գիտեր թէ, մարդս չի կրնար աշխարհաշէն լինիլ քանի որ ՂԱԿ կրօնասէր է :

Ե .

« Թէ ճշմարիտ էրևո-ւի-նը ՄԻԱՅՆ կրօնասիրութեան եւ նորա վերաբերեալ ուսմանց թշ չէ »

Վասն զի ՄԻԱՅՆ կրօնասիրութիւնը ինչպէս վերը յայտնեցինք մարդս աննկատ եւ մեռած կրնէ այս աշխարհիս համար . եւ հետեւաբար կը զրկէ զանի բոլոր այն գիտութիւններուն տէր լինելէն որոնցմով միայն հնարաւոր է մեր երջանկութիւնը . կը հարցնեմ Պ. Փափազեանին ճշմարիտ կրթութիւնը ՄԻԱՅՆ կրօնասիրութեան մէջ է, եթէ ոչ ուսումնասիրութեան . եւ շատ անգամ ՄԻԱՅՆ կրօնասիրութիւնը զմեզ յետադէմ չընէր . Եթէ մենք ուսումնասէր չըլինելով ՄԻԱՅՆ կրօնասէր լինէինք Երուսաղէմի մէջ Քրիստոսի գերեզմանէն ելած լոյսը դեռ մեզի մինչեւ այսօր երկնային չիպիտի սեպէինք, քանի որ՝ հիմա կրօնասիրութեան հետ ուսումնասիրութիւն ստանալով՝ կարող եղանք գիտնալու թէ մեր վարդապետները ժամանակ մը լոյսով ժողովուրդը խաբելու ելած էին : Բանադրանքներու ապօրինաւորութիւնն ու բնաւ ուժ

շունենայնին պիտի գիտնայինք եթէ ՄԻԱՅՆ կրօնասէր լինէինք : Հրէից ազգը այս խեղճութեան մէջ պիտի իյնար թէ որ ՄԻԱՅՆ կրօնասէր չլինէր եւ մեր ազգը կործանման մօտ կը հասնէր անցեալները՝ եթէ ՄԻԱՅՆ կրօնասէր չլինելով Հաննա վարդապետի մը անէծքը բանի մը տեղ չդնէինք . կարծեմ Պ. Փափաղեանը ինձմէ շատ լաւ համոզուած է որ ՄԻԱՅՆ կրօնասիրութիւնը առանց բնական գիտութեանց , մեզ ճշմարիտ կրթութութեանէ՝ հեռու կը պահէ մանաւանդ քանի որ ՄԻԱՅՆ կրօնասիրութիւնը մարդս մարդատեաց կրնէ , կրօնքը չէ որ մեր սրտին մէջ մեր եկեղեցւոյ ընդունածէն բան մը սղակաս հաւատացող ուրիշ ազգաց վրայ թշնամութիւն կը յարուցանէ , ՄԻԱՅՆ կրօնասիրութիւննիս չէր որ հրէաները դատապարտեալ , Մահմէտականները հեթանոս , Հռովմէականները Նեռադաւան , Բողոքականները աղանդաւոր ճանչցուց մեզ եւ ստանկով մեր Ազգային ընկերականութիւնը դղրդեց , մեր կղերքը չէ որ ՄԻԱՅՆ կրօնասիրութեան կրթնած շարունակ կը քարտղէ մեզ թէ բացի լուսաւորչական եկեղեցիին հետեւողներէն՝ ուրիշ ամեն ազգերն եւ տարբեր կրօնական դրութեանց հետեւողներուն ծառնայինք՝ որ ամենեւին վայել չէ մարդկութեան . միայն կրօնասիրութիւնը չէր որ Քրիստոնեաց աշխարհս Մահմէտականութեան թշնամիրրաւ երբնորս ձայնն առաջին անգամ լուեցաւ , եւ հետեւաբար արդի Քրիստոնէութեան եւ Մահմէտականութեան մէջ եղած թշնամու

Թիւնը Քրիստոնեայ կղերին դատապարտելի ՄԻԱՅՆ կրօնասէր լինելուն արդասիրը չէ՞ . Պ . Փափազեանը արդեօք դեռ կրնայ պնդել թէ ճշմարիտ կրթութիւնը ՄԻԱՅՆ կրօնասիրութեան եւ անոր վերաբերեալ ուսմանց մէջ է , երբ այս մտլութեան մինչեւ հիսնա ըրած ահագին կոտորածները կը տեսնէ* :

• 9 •

Թէ Տարդա աշխարհ եկած չէ ԼՈՍ հանդերձեալ կենաց համար տանջուելու :

Բաց ՚ի մեր կրօնամուլ Փափազեանէն կայ արդեօք ուրիշ մէկն ալ՝ որ այս սկզբութիւններնուս ճշմարտութիւնը չիտեսնէ , երբ խորհի թէ մարդու եթէ այս աշխարհս եկած է ԼՈՍ հանդերձեալ կենաց համար տանջուելու , հապա ինչո՞ւ համար Աստուած Հրէից ազգին ազատութեանը համար այնքան ջանադիր եղաւ , ինչո՞ւ զանոնք այնքան նեղեց Նգիպտացոց ձեռքէն ազատելու համար , ինչո՞ւ անոնց զատ երկիր , մեծամեծ քաղաքներ , տէրութիւն եւ հարստութիւնք շնորհեց , միթէ ասոնք ամէնքը չեն յայտներ թէ Աստուած ամենեւին չի հաճիր որ մարդիկ թողուն բոլոր ի-

* Պ . Ստեփան Փափազեանի շարամտութիւնը չի յագեցնելու համար հարկ է որ այս խօսքերս ինչ իմաստով ըսելու հոս յայտնեմ , եւ իմացնեմ իմ ընթերցողացս թէ վերի խօսքերովս ես չէ թէ կրօնքը յանցաւոր կը սեպեմ՝ այլ ըսել կ'ուզեմ որ ժողովուրդ մը որ ՄԻԱՅՆ կրօնասէր է եւ անկից ՚ի զատ ուրիշ բանմը չունի , հարկաւ իւր կղերին կոյրզկուրայն հետեւելով պիտի նախատէ եւ աստէ ամէն անոնք որք իրէն հեռ կրօնակից չ'են :

րենց աշխարհաշէն գործքերնին եւ ԼՈՎ հանդեր
 ձեալ կենաց համար տանջուին, այսինքն առ-
 տուրնէ մինչեւ իրիկուն աղօթք ընեն, պահեցողու-
 թիւն ունենան, լան, ողբան եւ տէր ողորմեա կո-
 չեն, արդարեւ մեծ յիմարութիւն մի է այս տե-
 սակ սկզբունք մը ընդունիր որ բնաւ պատիւ չի
 բերէր մարդասէր արարչին եւ ոչ ալ մարդուս,
 հազիւ թէ երկարաբանելու հարկաւորութիւն կայ,
 վասն զի ամենափթամիտ մէկն ալ կրնայ համոզու-
 իլ թէ «մարդս աշխարհ եկած չէ ԼՈՎ հանդեր-
 ձեալ կենաց մէջ տանջուելու» եւ թէ մարդս
 այս աշխարհիս մէջ ալ շատ երջանկութիւններ
 ունի վայելելու. Պ. Փափազեանը այս չընդունիր
 եւ կը հարցնէ մեզ թէ որոնք են այդ երջանկու-
 թիւնները: Արցաւիմ՝ յիրաւի իւր վերայ, վասն
 զի ինչպէ՞ս կարելի է չի տեսնել այն օրհնութիւն-
 ները եւ երանութիւնները որոնք բնութիւնը տու-
 ած է մեզ վայելելու, Պ. Փափազեանը կրնայ
 ինձ բնութեան մէջ ապերջանկութիւն մը ցուցնել,
 միթէ մարդս ինքն չէ պատճառ իւր թշուառու-
 թեանը, մարդս բաւականասիրութեամբ եւ պար-
 զասիրութեամբ կարող չէ շատ երջանկութիւն-
 ներ վայելելու*:

* Մարդս իւր կազմութեան համեմատ երեք տեսակ
 երջանկութիւններ կրնայ վայելել. բաւականասիրու-
 թեամբ կրնայ իւր անասնական կամ բնական կարօտու-
 թիւնները լեցնել. այսինքն կրնայ հանդերձ ունենալ
 հազնելու, տեղ մը բնակելու, եւ կերակուր ուտելու.
 Բայց դժբաղդարար մարդս իւր անբաւականասիրութեամ-
 րը ստոնք անդամ չի կրնար ձեռք բերել եւ ինքզինքը

Է.

Թէ Տէնք որքան որ կրօնքը , նոյնքան ալ էլ յարգէ՞ք նորա պաշտօնէաները :

Եթէ չարամիտ մարդը մարդկային ընկերու-
թեան ամենէն մտասակար անդամն է , Պ. Փա-
փաղեանն ալ արդարեւ մեր ընկերութեան մէջ
նոյնպէս պարտիմք ընդունել , վասն զի նա ամենեւին
խեղճ չըներ մեր վերոյիշեալ խօսքէն հետեւցնելու
թէ որովհետեւ ես չեմ յարգեր կրօնականները
հետեւաբար եւ չեմ յարգեր կրօնքը , վասն զի
երկուքն ալ հաւասար կը յարգեմ : Պ. Փափաղ-
եանը յիրաւի որքան որ չարամիտ նոյնքան ալ ի-
մաստակ է եղեր , վասն զի նա չէ ուղեր վերի խօս-
քէս հասկնալ թէ՛ ես ինչ ըսել ուզած եմ , այ-
սինքն նա չէ հաճեր հասկնալ թէ ես ըսել կու-
ղեմ թէ՛ որքան որ կրօնքը՝ նոյնքան ալ ՆՈՐԱ ՊԱՇ-
ՏՕՆԵԱՆԵՐԸ , այսինքն նորա ճշմարիտ պաշտօն-
եաները կը յարգեմ , եւ ես կրօնաւորաց ՄԵԾԱԳՈՅՆ
մասը կրօնի պաշտօննեայ չեմ ճանչնար Պ. Փա-
փաղեանի պէս , այլ միայն անոնք կը ճանչնամ

Թշուառ կը կոչէ առանց իրաւունքի : Երկրորդ՝ մարդս
բարոյապէս կրնայ երջանիկ լինիլ քանի որ մտածէ թէ
ինքն յաւիտեան պիտի կեանք ունենայ եւ միշտ բարո-
յական էակ մը պիտի ճանչցուի , մարդըս այս մասին մէջ
ալ ինքզինքը ասերջանիկ ըրած է , յաւիտենականութեան
վրայ որոշ գաղափար մը չունենալով , ուստի այս մա-
սին մէջ ալ ինքն իւր ձեռքովն ասերջանիկ եղած է : Եր-
րորդ՝ մարդս կրնայ երջանիկ լինել իւր մտաւորականու-
թեան գացմամբը , իսկ ասկի ալ զրկուած է նա ուսմանց
եւ գիտութեանց թշնամի լինելով Պ. Փափաղեանի պէս :

կրօնի պաշտօնեայ՝ որոնք իրաւունք ունին այս ախտ-
 զոսին, իսկ վերի խօսքէս իմ միտս ճիշտ այս լինե-
 լը յայտնելու համար նոյն խօսքէս անմիջապէս
 ետքը ըսածս հոս ընթերցողացս կը ներկայացնեմ.
 զոր Պ. Փափազեանը չարամտաբար չէ յիշեր իւր
 յա մ'ն ազին մէջ . . . ահաւասիկ իմ ըսածս « չեմք
 մուռնար հոս յիշելու թէ մենք որքան որ կրօնքը,
 նոյնքան ԿԸ ՅԱՐԳԵՄԲ նորա պաշտօնեաները եւ
 միանդամայն չեմք կրնար ուրանալ թէ մեր Ազգը
 ծանօթ կամ անծանօթ արժանաւոր եւ ՅԱՐԳԱՆԱՑ
 արժանի կրօնաւորներ ունի » . վերոյիշեալ խօսքին
 բուն իմաստը լաւ հասկնալու համար՝ լաւ կը ներ ան-
 կրօն հռչակող թշնամիս թէ որ Թռչնիկի նոյն թուոյն
 մէջ հետեւեալ ըսածներս ալ կարդար» . Այս յօդու-
 ածիս հեղինակը թշնամի չէ կրօնաւորու թեան, նմա-
 նապէս բոլոր Հայ Արիտասարդութիւնը, եւ ոտոնք
 խիստ լաւ գիտեն ՅԱՐԳԵԼ այն կրօնաւորները որ
 լաւ ճանչնալով իր բեանց պարտաւորութիւնները
 նախ իրենք օրինակ կը լինին ժողովրդեան » :

Հիմա իմ սիրելի ազգս կրնայ տեսնել թէ ես
 անկրօն չեմ, ինչպէս կաշխատի հաստատել մեր
 Փափազեանը, այլ ընդհակարակն իրմէ հազար
 անգամ աւելի պաշտպան լինելով կրօնքի՝ պար-
 տաւորեալ եմ կղերին հետ մարանջիլ . . . Պ.
 Փափազեանը չէր կրնար խորհիր ամենեւին թէ ե-
 թէ ես անկրօն եմ, ի՞նչ կարեւորութիւն ունիմ
 կրօնի պաշտօնեաներուն պարտազանցութիւննե-
 բուն դէմ բարկանալու :

Չեմ ուզեր ալ երկարել այս գրութիւնս,

վասն զի անշուշտ տեսան իմ ինթերցուղներս թէ
 Պ. Փափաղեանը թշնամաբար ինձ դէմ յարձա-
 կում ըրած է*, իսկ այս թշնամութեան պատճա-
 ւը « խորհուրդ դադանի ընկերութեանց » անուն
 գրքին հեղինակին հարցնելու է, որոյ հետ այս օ-
 րերս շատ տեսութիւն եւ մտերմութիւն ընելու վը-
 րայ է պարոն Փափաղեանը . . . Աստուած յաջա-
 դութիւն տայ մեր ազգին, վասն զի քանի որ Պ.
 Չամբարձեանը նոր աշակերտներ կը հասցնէ, Չա-
 մբարձեանի սկզբունքներն ալ դադարելիք չունին
 եւ հետեւաբար Հայ ազգը բնաւ խաղաղութիւն
 չի պիտի ունենայ :

Վ.ՆՐՁՍԲԱՆ

Պ. Ս. Փափաղեանին սիրտը հարկաւ շատ պիտի ցա-
 լի երբ այս տեսրակս կարդայ, ուրեմն ասի իրեն թող
 իբրեւ դաս ընդունի ուսանելու համար թէ որքան կծու
 բան է սիրելի բարեկամի մը հրատարակաւ Ազգատեաց,
 Սահմանադրատեաց, անուսումն եւ քերականութիւն չի-
 գիտցող անձեաններ տալը. զիտեր Պ. Փափաղեանը
 թէ իմ սիրտս ամենեւին չիպիտի ցաւեր եթէ միայն իմ
 հրատարակած սկզբունքներուս դէմ խօսէր եւ ան ալ

* Պարոն Փափաղեանը իմ իրեն հետ ըրած խօսքերս
 ալ կը յիշէ առանց մտածելու որ այս ալ յետին վատու-
 թեան եւ անհաւատարմութեան մէկ օրինակն է, սակայն
 թող գիտնան իմ ընթերցուղներս թէ ես իրեն ինչ որ
 խօսեցայ կէս մը գինքը փարձելու՝ կէս մըն ալ՝ իրեն
 իմ թռչնիկի մէջ հրատարակած էս ծուռ մեկնութիւն մը
 հանելու ջանադիր լինելը անանելովս հանապարհաբար խօ-
 սեցայ :

օրինաւոր փաստաբանութեամբ, այսինքն որամարա-
 նական եւ մաթեմատիկական ոճով որ հինա ընդունելի
 է ամեն իմաստասիրաց: Ի՞նչ հարկ կար Պ. Փափաղեա-
 նին համար որ զիս ազգատեաց եւ Սահմանադրատեաց
 անուանէր, քանի որ իւր խիղճը անգամ հարկաւ կը
 յանդիմանէր զինքը երբ այս ածականը ինձ կուտար,
 ինձ՝ որ իրմէ աւելի Ազգասէր եւ Սահմանադրասէր կը
 ճանչնայ Հայ հասարակութիւնը, եւ մեծ իրաւամբ, ըստ
 որում եթէ ես Ազգասէր եւ Սահմանադրասէր չիլինէի
 Պ. Փափաղեանն ալ կրնայ վկայել որ մեծամեծ շահեր
 կրնայի ձեռք անցնել «ճանց պէս», դարձեալ ի՞նչ սրտով
 զիս անուումն եւ քերականութիւն չի գիտցող կանուա-
 նէ, քանի որ ինքն լաւ գիտէ որ ես Եւրոպայի փիլի-
 սոփայից չէ թէ 100 ին մէկին չափ այլ դուցէ թէ քիչ
 մըն ալ աւելի տեղեկութիւն ունիմ ուսմանց եւ գիտու-
 թեանց... նախանձութիւն, նախանձութիւն գոնէ Պ.
 Փափաղեանի սրտին մէջ մտնելու չէիր. դարմանալի է
 արդեօք որ Արեւելեան գլուխ մի ալ, Հայու տղայ մի
 ալ Եւրոպացի ուսումնականներուն չափ ուսմանց եւ գի-
 տութեանց տեղեակ լինի. Եւ մեր Պ. Փափաղեանը որ
 շատ աղէկ գիտէ թէ մեզի համար մեծ բան մը չէ Եւ-
 րոպացի իմաստասիրաց հաւասարիլ, դադարախաղկից
 կը լինի ուսմանց հետ միմիայն իւր սրտին նախանձու-
 թիւնը յազեցնելու համար: Ար ցաւինք Փափաղեանի
 վրայ որ ամենեւին տեղեկութիւն չունի օրինաւորաբար
 սկզբունք մը պաշտօրանելու եւ կամ ուրիշի մը սկզբուն-
 քը որմամբանաբար հերքելու, եւ հետեւաբար խեղճ հակա-
 ոակորդի մը միայն վայելուչ ընդացքով «Հաւատքիս
 քֆրեց» ական ոճին կը դիմէ* որպէս զի քիչ կամ շատ
 իմաստասերները թէ որ խնդան իւր վերայ, գոնէ խել
 մը ուսմիկներ գոնէ իրեն ձայնակցելու:

* Նոյն ոճը ունի նաեւ մեր այն հակաակորդը որ Անլիկիա
 հանդիսին մէջ մեզի դէմ յարձակած է խիտ տմարդաբար. նո-
 ղա հետ ալ պիտի խօսիմ շուտով:



